10.09.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թ.
սեպտեմբերի 3-ի N 1475 - Ա
որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 9-րդ պարբերությամբ և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) անդամների թեկնածուների առաջարկման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովի կազմը բաղկացած է 9 անդամից, այդ թվում՝ նախագահից և 8 անդամից: Հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի կողմից: Քարտուղարը չի հանդիսանում հանձնաժողովի անդամ:

3. Հանձնաժողովի նախագահը պետք է լինի մաքսային կամ հարկային մարմնում վարչական պաշտոն զբաղեցնող:

4. Սույն կարգի համաձայն կոմիտեի ներքին աուդիտի, իրավաբանական, մաքսային հսկողության, հետաքննության և օպերատիվ-հետախուզության, քննչական, համալիր հարկային ստուգումների, ներքին անվտանգության, հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության գործառույթ իրականացնող ստորաբաժանումների (այսուհետ՝ ստորաբաժանումներ) ղեկավարները, ինչպես նաև կոմիտեի նախագահի առաջին տեղակալը, կոմիտեի նախագահի տեղակալները և կոմիտեի գլխավոր քարտուղարը

կոմիտեի նախագահին ներկայացնում են սույն կարգի 6-րդ կետով նախատեսված չափանիշները բավարարող մեկական թեկնածու (թեկնածուներ) հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով:

5. Ստորաբաժանումների ղեկավարները կարող են ներկայացնել նաև իրենց թեկնածությունը:

6. Թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին՝

1) ներկայացման պահին նախորդող 10 տարվա ընթացքում պետք է ունենա մաքսային կամ հարկային ծառայության առնվազն 2 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ կամ հանրային այլ ծառայության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ.

2) ներկայացման պահին պետք է զբաղեցնի մաքսային կամ հարկային ծառայության բարձրագույն կամ գլխավոր պաշտոն կամ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոն.

3) ներկայացմանը նախորդող մեկ տարվա ընթացքում չպետք է ենթարկված լինի կարգապահական պատասխանատվության:

7. Սույն կարգի 4-րդ կետում նշված առաջարկություններին կցվում է թեկնածուի ծառայողական բնութագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ